եթէ վասն հաւատոց[1] ես, ընդունելի է քեզ այդչափ[2] աշխատանք քո[3]. արդ՝ մի՛[4] վասն
վասն պատասխանւոյն[5] ձանձրանալ[6] ի մէնջ, այլ[7] երթ ի խաղաղութիւն[8]»:

58 Իսկ[9] նա ասէ. «Ո՛չ այդպէս. այլ եթէ վասն իշխանութեան է[10], ես ոչ երկնչիմ[11] ի
ձէնջ, իսկ եթէ վասն թշնամութեան Կարապետին[12] ընդ մեզ[13], ո՞չ[14] ինքն ի կնոջէ է
ծնեալ[15], ո՞չ եւ Տէրն ինքն[16] ի կնոջէ ծնաւ[17], ո՞չ[18] առաքեալքն[19] եւ մարգարէքն մայր
ունէին[20]: 59 Արդ՝ ես մտանեմ, ո՛վ Տէր[21], եւ զմայրն[22] քո բարեխաւս ունիմ ինձ[23]: 60 Մի՛
առներ[24] յիս զցասումն[25] բարկութեան քո, զի[26] մի՛ եղէց նշաւակ աշխարհի[27]: 61 Զի
եթէ[28] դու զկնոջ կաթն արբեր, գոնեա եւ[29] զիս տաճարիս արժանի արա՛[30]»:

62 Եւ զայս ասացեալ՝ եմուտ ի տաճարն՝[31] համբուրելով[32] զորմ[33] տաճարին: 63 Եւ
գնաց առաջի սրբոյ սեղանոյն, եւ ծունր կրկնեալ՝ ասէ[34]. «Տէ՛ս, Տէ՛ր, զբեկեալ սիրտ[35]
իմ, եւ ողորմութիւն արա՛ վիրաւորելոյս[36]. զի դու ոչ յիշեցեր[37] յողորմութեան[1]
զբարկութիւն քո: 64 Արդ՝ աւրհնեալ եղիցի[2] անուն քո յաւիտեան[3]»:

---

1 *o* հաւատոյ *փխ* հաւատոց
2 *sv* այդ *փխ* այդչափ
3 *hmsv* աշխատանքդ *փխ* աշխատանք քո *(blo)*
4 *b չիք* արդ մի
5 *lhmo* պատասխանոյ *փխ* պատասխանւոյն *(bsv)*
6 *b չիք* ձանձրանալ / *sv* ձանձրանար *փխ* ձանձրանալ
7 *b չիք* այլ
8 *hmo* խաղաղութեամբ *փխ* ի խաղաղութիւն *(blsv)*
9 *hmo* Եւ *փխ* Իսկ
10 *h չիք* է
11 *hmo* չերկնչիմ *փխ* ոչ երկնչիմ *(blsv)*
12 *hmo* Կարապետիս է *փխ* Կարապետին *(blsv)*
13 *b չիք* ընդ մեզ
14 *hmo* ոչ ապաքէն եւ
15 *bsv* ծնաւ, *l* ծնեալ *փխ* է ծնեալ *(hmo)*
16 *ho չիք* ինքն
17 *b* ծնեալ, *sv* է ծնեալ *փխ* ծնաւ *(lho)*
18 *ho* եւ *փխ* ոչ *(bls)* / *v* եւ ոչ
19 *v* առաքեալք
20 *ho* ի կնոջէ ծնան *փխ* մայր ունէին *(blsv)* / *m չիք* ոչ եւ Տէրն … ունէին *(2 տող)*
21 *b* Տէր իմ
22 *hmo* զքո մայրդ *փխ* զմայրն քո *(blsv)*
23 *hmo* ինձ բարեխաւս ունիմ *փխ* բարեխաւս ունիմ ինձ *(blsv)*
24 *m* յառներ
25 *ho* ցասում
26 *hmo* եւ *փխ* զի *(blsv)*
27 *m* երկրի, *ho* աշխարհիս *փխ* աշխարհի *(blsv)*
28 *b* թէ
29 *bl չիք* գոնեա եւ
30 *blv₄* ընդունեա՛ ի տաճարդ արժանապէս *փխ* տաճարիս արժանի արա
31 *hmo* ներքս *փխ* տաճարն *(blsv)*
32 *sv* եւ համբուրեաց *փխ* համբուրելով
33 *b* զորմն, *hmo* զորմս *փխ* զորմ *(lsv)*
34 *hmo* ասէր *փխ* ասէ *(blsv)*
35 *hm* զբեկեալս սրտիւ *փխ* զբեկեալ սիրտ
36 *hm* ինձ վիրաւորելոյս / *o* ինձ վիրաւորեցելոյս *փխ* վիրաւորելոյս *(blsv)*
37 *hmo* յիշես *փխ* յիշեցեր *(blsv)*